



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

6 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի
Ա. Թունյանի

Քննության առնելով Սվետլանա Մաթևոսյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Սվետլանա Մաթևոսյանը 18.01.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝
վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1192-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քաղա-
քացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանա-
դրությանը համապատասխանության հարցը:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1192-րդ հոդվածի 1-ին մասում
առկա նորմը՝ նույն օրենսգրքի 1193-րդ հոդվածի 1-ին մասին և 1199-րդ հոդվածի 1-ին
մասին հակասելու հիմքով ստեղծում է իրավական անորոշություն և հակասում է ՀՀ

Սահմանադրության 1-ին, 39-րդ և 79-րդ հոդվածներին, որն էլ իր հերթին հանգեցնում է ՀՀ Սահմանադրության /06.12.2015թ. փոփոխություններով/ 61-րդ, 63-րդ հոդվածների խախտման:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավանորմի և կտակի ազատության սկզբունքի, ինչպես նաև ցանկացած գույքի վերաբերյալ կտակային հանձնարարություն տալու կտակարարի իրավունքի միջև առկա հակասությունն առաջ է բերում իրավական անորոշություն, քանի որ անձի համար անհասկանալի է, թե կտակում ինչպիսի գույքի վերաբերյալ կարգադրություն կարող է ներառվել:

Դիմողը գտնում է, որ անձը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ և 1199-րդ հոդվածներում առկա իրավակարգավորումը, կազմում է կտակ, որում ներառում է ինչպես սեփականության իրավունքով իրեն պատկանող, այնպես էլ չպատկանող և ապագայում ձեռքբերվելիք գույքի վերաբերյալ կտակային հանձնարարություն, սակայն իրավակիրառող մարմինը հիմք ընդունելով 1192-րդ հոդվածը՝ անվավեր է ճանաչում կտակը, քանի որ կտակ կազմելիս այդ գույքը կտակարարին չի պատկանել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ հոդվածի 2-րդ մասի ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորելիս դիմողը գտնում է, որ «պատճառաբանված որոշում» արտահայտության չբացահայտվածությունը և անորոշությունը հանգեցնում են դատարանի կամայական մեկնաբանության, քանի որ չկա պատճառաբանվածության այն հստակ չափանիշը, որով դատարանը պետք է առաջնորդվի որոշում կայացնելիս:

Դիմողը նշում է նաև, որ վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է պահանջ, ըստ որի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Սակայն պատճառաբանվածության պարտադիր պահանջը չի վերաբերում այն դեպքերին, երբ բողոք է բերվել իրավունքի զարգացման անհրաժեշտության հիմնավորմամբ՝ առաջացնելով օրենսդրական բաց:

Դիմողի կարծիքով՝ վերոնշյալի համատեքստում իր համար անհասկանալի է և կանխատեսելի չէ դատարանի որոշումը, քանի որ անձը «իրավունքի զարգացման խնդրի» հիմքով բողոք բերելիս դատարանից ակնկալում է պատճառաբանված դատական ակտի կայացում, որը հնարավորություն կտա նաև հետագայում այդ հիմքով բողոք բերելու դեպքում իր վարքագիծը համապատասխանեցնել որոշման պատճառաբանական մասին:

3. Դատական կազմը ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից՝ գտնում է, որ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1192-րդ հոդվածի առնչությամբ

Խնդրո առարկա դրույթի համաձայն՝ կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը: Այսինքն՝ օրենսդիրը, կանոնակարգելով ժառանգման իրավունքի իրացման հետ պայմանավորված հարաբերությունները, առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգություն կարող է բացվել բացառապես ժառանգատուին **սեփականության իրավունքով** պատկանող գույքի նկատմամբ, որը ժառանգության բացման օրը պատկանել է կտակարարին:

Անհատական դիմումին ներկայացվող պահանջներից է այն, որ դիմողը պետք է հիմնավոր և պատշաճ ձևով հիմնավորի, թե իր կողմից վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև հիմնավորի իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, **պահանջներ**, որոնց չպահպանումը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է: Խնդրո առարկա դիմումի շրջանակներում դիմողը չի հիմնավորել վիճարկվող դրույթի հակասահմանադրականության հետևանքով իր կողմից մատնանշված սահմանադրական իրավունքների խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ

Նշյալ դրույթի սահմանադրականությունը դիմողը վիճարկում է երկու առումով՝ նշելով, որ, նախ՝ այս դրույթում բացահայտված չէ «պատճառաբանված որոշում» արտահայտությունը, ինչը հանգեցնում է անորոշության, դատարանի կողմից կամայական մեկնաբանության, երկրորդ՝ առկա է օրենսդրական բաց այն առումով, որ պատճառաբանվածության պարտադիր պահանջը չի վերաբերում այն դեպքերին, երբ բողոք է բերվել իրավունքի զարգացման անհրաժեշտության հիմնավորմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թվականի ապրիլի 9-ի ՄԴՈ-690 որոշմամբ մի շարք իրավական դիրքորոշումներ է արտահայտել վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշման պատճառաբանված լինելու վերաբերյալ՝ արձանագրելով, մասնավորապես, «... Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարելու է երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Վճռաբեկ վարույթում բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ոչ միայն վճռաբեկ բողոքի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելը, այլև բողոքը վերադարձնելու պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը...»: Նշյալ իրավական դիրքորոշումներում Սահմանադրական դատարանը շեշտադրել է այն, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի **պատճառաբանված, և օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի այդ որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը՝ չանդրադառնալով պատճառաբանվածության իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությանը**: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը դիմողի կողմից վիճարկվող՝ խնդրո առարկա դրույթը պարունակող 233.2-րդ հոդվածով լրացվել է **10.06.14 ՀՕ-49-Ն օրենքով, ըստ որի՝** վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Այսինքն՝ օրենսդրական հետագա փոփո-

խությունները կատարվել են Սահմանադրական դատարանի նշյալ որոշման մեջ արտահայտված՝ պ³ ի × 3³ ընթացիկ բանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջին վերաբերող դիրքորոշումների համատեքստում: Ինչ վերաբերում է «պատճառաբանվածություն» եզրույթի իրավական բովանդակությանը, շրջանակներին, տարրերին, ապա յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով պայմանավորված՝ «պատճառաբանվածություն» եզրույթը կարող է ունենալ տարբեր նրբերանգներ, և վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակներում է գտնվում նորմատիվ այս պահանջին բովանդակություն հատրդելը: Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանի նշյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում դիմողի առաջադրած փաստարկներն ակնհայտ անհիմն են:

Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկներին, որոնց համաձայն պատճառաբանվածության պարտադիր պահանջը չի վերաբերում այն դեպքերին, երբ բողոք է բերվել իրավունքի զարգացման անհրաժեշտության հիմնավորմամբ, ապա դրանք ուղղված են նշյալ դրույթի հակասահմանադրականության հիմնավորմանը **ենթադրյալ օրենսդրական բացի լույսի ներքո**: ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010 թվականի փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ, անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում Սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը, նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը **խախտում է կամ կարող է խախտել** կոնկրետ սահմանադրական իրավունք: Զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ

սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածը, սահմանելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը, ի թիվս այլնի, նշում է, որ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևությանը, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եսկան նշանակություն ունենալ **օրենքի միատեսակ կիրառության համար**: Օրենսդրորեն ամրագրված՝ «օրենքի միատեսակ կիրառություն» եզրույթն ընդգրկուն բովանդակություն ունի, և իրավունքի զարգացման խնդիրը դրա դրսևորումներից մեկն է: Ընդ որում, եթե մնացած դրսևորումներն ուղղակիորեն վերաբերում են անձի խախտված իրավունքների վերականգնմանը, և օրենսդիրը վճռաբեկ դատարանի համար պարտադիր է համարել դրանցից յուրաքանչյուրի բացակայության հիմնավորումը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելիս, ապա «իրավունքի զարգացման խնդիր» եզրույթն ունի այլ, ավելի վերացարկված բովանդակություն: Այս հարցում օրենսդրական կանոնակարգումը ևս ունի առանձնահատկություն առ այն, որ վճռաբեկ դատարանը **պետք է գտնի**, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, հետևաբար՝ պատահական չէ, որ օրենսդիրը դրա համար չի նախատեսել հիմնավորման պահանջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի **թիվ 1 դատական կազմը**

Ո Ր Ո Շ Ե Ց

Սվետլանա Մաթևոսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը
մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

6 փետրվարի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-2